ԼՈՍ ԱՆՋԵԼԵՍԻ ԴԱՏԱՐԱՆԸ ԿԱՐՃԵՑ ՀԲԸՄԻՈՒԹՅԱՆ ԴԵՄ

Մեսրոպ արք. Մութաֆյանի դատը

Լոս Անջելեսի դաշնային դատարանը հիմքերի բացակայության պատճառով կարճեց Հայկական բարեգործական ընդհանուր միության դեմ Պոլսո հայոց պատրիարք Մեսրոպ արք. Մութաֆյանի հարուցած գործը, Նյու Յորքից հաղորդում է «Ազգի» մասնավոր թղթակիցը:

Ինչպես հայտնի է մեր ընթերցողներին, 2005 թ. հունվարի 13-ին Մեսրոպ պատրիարքը հանուն Պոլսո հայոց պատրիարքության դատական գործ էր հարուցել Լոս Անջելեսի նահանգային դատարանում, ՀԲԸՄիությունից պահանջելով «Մելգոնյան կտակի վերաբերյալ հաշվետվությունը, այսինքն՝ շուրջ 80 տարի առաջ Կարապետ աղա Մելգոնյանի նվիրատվության փոխանցումը Պոլսո պատրիարքության՝ պատճառաբանելով, որ Կիպրոսի Մելգոնյան վարժարանը ՀԲԸՄիությունը փակելու իր տխրահռչակ որոշմամբ դրժել էր կտակի ավանդապահը լինելու իր պարտականությունը եւ թերացել էր հարգել Պոլսո պատրիարքության նկատմամբ՝ կտակից բխող իր նյութական հանձնառությունները:

Իր հերթին, ՀԲԸՄիությունը պահանջել էր հարուցված գործը կա՛մ հիմքից զուրկ համարել եւ կա՛մ տեղափոխել Նյու Յորքի դաշնային դատարան:

Ապրիլի 15-ին դաշնային դատարանի դատավոր Մանուել Ռեալը վճռեց անհիմն նկատել Մեսրոպ պատրիարքի հարուցած գործը եւ զրկել նրան նույն հայցը հետագայում հարուցելու իրավունքից: Դատարանը մերժեց նաեւ գործը Նյու Յորք տեղափոխելու ՀԲԸՄիության խնդրանքը: